Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20088

1901.

2010

U25
ա
2363

(76)

ՀԱՇԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՅԱ[illegible] ԿԱՐՈՒՑՄԱՆ

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ Վ. ԻՃ. ՀԱՅՈՑ

Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱԲԻՈՅ

ՎԱՍՆ 1900-1901 ՈՒՍՈՒՄՆ. ԱՄԻ։

2002

372
Ս-93

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Ի Տպարանի Սերովբէի Աւագեան
1901

13124

372
1-93

ՀԱՇԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԲՈՐԴ ՅԱՐԿԻ ԿԱՌՈՒՅՑՄԱՆ

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՈՑ

Նոր-Նախիջեւանի եւ Բեսարաբիոյ

ՎԱՍՆ 1900-1901 ՈՒՍՈՒՄՆ. ԱՄԻ.

ՆՈՐԴՆԱԽԻՋԵՒԱՆ

Ի Տպարանի Սերովբէ Ի. Ա. ագեան

1901

25873.4.2.

5440-56

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արա ССР
Ա. Մյասնիկյանի անվան

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ

Վասն 1900-1901 ուսում. ամի.

Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմական Դպրանոցի Հոգաբարձութիւնը՝ իւր կանոնադրութեան 27 յօդ. համաձայն՝ ամեն տարի պէտք է ներկայացնէ թեմիս Սրբազան Առաջնորդին և Նորին Գերապատուութեան ձեռքով նաև Աղգիս Վեհափառ Կաթողիկոսին Դպրանոցի կառավարութեան թէ՝ ուսումնական և թէ՝ տնտեսական մասի տարեկան հաշիւները և ապա՝ համաձայն 17 յօդ. իա. պարբ.՝՝ նոյն հաշիւները լոյս ընծայէ առանձին տպագրութեամբ՝ ընդհանուրի տեղեկութեան համար։

Վերոյիշեալ կանոններին հետևելով՝ Դպրանոցիս Հոգաբարձութիւնը քաղցր պարտականութիւն է համարում իրեն հրատարակել ահա իւր 1900-1901 ուսումն. ամի մէջ ունեցած գործառնութեանց և Դպրանոցի ուսումնական ընթացքի, տնտեսական կառավարութեան, որպէս նաև երրորդ յարկի կառուցման համառօտ տեղեկագիրն ու հաշիւները։

Հաշուետուութեանս տարում Դպրանոցի Հոգաբարձութեան անդամներն էին՝ պ.պ. Կարապետ Խոճայեան, Դաւիթ Խոճայեան, Անդրէաս Սալթիքեան, Գրիգոր Խնձորեան, Պետրոս Զորայեան և Յարութիւն Մելքոնեան—Եղեկեան, որոնք իրենց պաշտօնի մէջ հաստատուած են Նորին Ս. Օծութիւն՝ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Վեհափառ Հայրապետի Սրբատառ կոնդակով 1900 ամի Ապրիլի 18-ին։ Յարուայ

ընթացքում Խորհրդարանս ծանր կորուստ ունեցաւ յանձին Յ. Մելքոնեան-Եղեկեանի, որ ծաղիկ հասակում կնքեց իւր մահկանացուն Իտալիայի Սան-Ռեմօ քաղաքում 1901 թ. Մարտի 1-ին։ Ողբացեալ Մելքոնեանի տեղը Հոգաբարձական նիստերին մասնակցելու հրաւիրուեցաւ առաջին անձնափոխանորդ պ. Մանուկ Պոպով։

Հոգաբարձութեանս Խորհրդարանը անցեալ 1900-1901 ուսումնարանական տարուայ ընթացքում ունեցել է 18 ժողով և զբաղուել է Դպրանոցիս առաջադիմութեան և նիւթական ապահովութեան վերաբերեալ այն բոլոր խնդիրներով, որոնք կանոնադրութեանս որոշ յօդուածներով ընդգծուած են յառաջագոյն՝ շարունակելով ու կատարելագործելով միանգամայն այն միջոցներն ու եղանակները, որոնք ձեռնարկուած են եղել նախկին Հոգաբարձական մարմինների ձեռքով և մուծանելով այն բարեփոխութիւնները, որոնք Հոգաբարձութեան կարծիքով Դպրանոցիս բարգաւաճման և ապահովութեան համար կարևոր են համարուած։ Եւ որպէս զի հայ հասարակութիւնը կարող լինի գէթ հարևանցօրէն ծանօթութիւն ունենալ Խորհրդարանիս պարապմանց առարկաների մասին՝ Հոգաբարձութիւնս պարտք է համարում դոցանից մի քանիսը արձանագրել այստեղ։

ա. Դպրանոցիս կանոնադրութեամբ պահանջվում է ամեն ամիս ստուգել Դպրանոցիս ելումուտքի հաշիւները ու հաշուեմատեանները, որ և անթերի ու ամենայն կանոնաւորութեամբ կատարուած է։ Եւ որովհետև գիշերօթիկ մասն ունենալու պատճառով Դպրանոցիս տնտեսական կառավարութիւնը առանձին հոգածութեան և աչալուրջ հսկողութեան կարիք ունի և ծանր է այդ գործը ամբողջապէս Հոգաբարձութեանս գանձապահ-անդամի վերայ բառնալ, ուստի և կազմուած է մի Տնտեսական Յանձնաժողով, որը և

պ. Գանձապահի հետ վարում է Դպրանոցիս տնտեսական կառավարութեան վերաբերեալ բոլոր ճիւղերը։ Բացի այդ՝ Դպրանոցս ունի նաև յատուկ տնտես, որը հոգում է առօրեայ բոլոր մանր ծախսերը՝ մանրամասնօրէն տրձանագրելով իւր արած ծախքերը յատուկ ժապաւենեալ մատեանի մէջ։ Հոգաբարձական ժողովը իւր հաշուառութեան միջոցին նկատի է առնում անշուշտ արուած ամենայն տեսակ ծախքերի վաւերաթղթերը ու կտրոնները։ Հոգաբարձութեանս գանձապահն է պ. Կարապետ Խոճայեան, որի տկարութեան պատճառով նոյն պաշտօնը ամենայն սիրելութեամբ մէկ տարուց աւելի է ահա որ վարում է Խորհրդարանիս անդամ պ. Գրիգոր Խնձորեան։ Տնտեսական Ժողովի անդամներն են՝ Գր. Խնձորեան, Մ. Պոպով, Գ. Զորայեան և Կ. Խոճայեան։

բ. Հոգաբարձութիւնս՝ առանձին հոգածութեան առարկայ անելով Դպրանոցիս եկամտից աղբիւրներն աւելացնելը՝ բազմիցս խորհրդածութիւն է ունեցել այդ խնդրի շուրջը։ Եւ, այդ իսկ նկատմամբ, ըստ օրինակի նախորդ Հոգաբարձութեան, աւելորդ և նոյն իսկ Դպրանոցիս շահերին վնասակար համարելով դպրանոցապատկան կրպակները աճուրդով վարձու տալու եղանակը, աշխատել է այդ անել մասնաւոր եղանակով։ Եւ, արդարև, Խորհրդարանս գալիս է այն եզրակացութեան, որ կրպակների այդ եղանակով շահագործութիւնը անհամեմատ աւելի օգտաւէտ է Դպրանոցիս շահերի համար։ Այդ եղանակով ահա վարձու արուած են Դպրանոցիս շինութեան ներքին յարկում գտնուած վեց կրպակները, Թէոդոսիայի նախկին Խալիպեան վարժարանի շէնքը և այն տունը, ուր ներկայումս գտնուած է բազաքիս Ս. Աստուածածին եկեղեցու ծխական ու-

սումնարանը իւր արհեստագիտական բաժիններով։ *) Բնականաբար բոլոր կապալառուների հետ օրինասահման պայմանագրեր են հաստատուած։

Եկամտի բացի այս աղբիւրներից, Դպրանոցիս պահպանութեան համար մեծ օժանդակութիւն են կազմում նաև Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմի ունևոր եկեղեցիները, որոնք՝ ըստ չափու կարողութեան՝ տարեկան միանուագ նպաստ են տալիս Դպրանոցի կառավարութեան համար։ Սակայն, նկատի ունենալով, որ թեմիս մի քանի եկեղեցիներ՝ կարողութիւն ունենալով հանդերձ՝ ազատ են մնացել Դպրանոցիս օժանդակելուց կամ համեմատաբար նուազ օժանդակութիւն են ցոյց տալիս՝ Հոգաբարձութեանը նախագահող Տ. Մուշէ վարդապետի առաջարկութեամբ Խորհրդարանս 1900 ամի Սեպտ. 23-ի և Հոկտեմ. 19-ի ժողովներում որոշեց դիմել թեմիս Գերապատիւ Առաջնորդ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսին՝ խնդրելով միջնորդել Ս.-Պետերբուրգի հայոց եկեղեցիների Հոգաբարձական խորհրդի առաջ, որպէս զի մայրաքաղաքի եկեղեցու տարեկան 750 ր. նպաստը աւելացնեն և հասցնեն այն տարեկան 6000 ր.։ Միևնոյն ժամանակ Հոգաբարձութիւնս՝ ի նկատի ունենալով մեր ընդարձակածաւալ թեմի ցիրուցան ընկած օտարախօս ազգայինների կրօնական և հոգեկան անհրաժեշտ պիտոյքներին բաւարարութիւն տալու կարևորութիւնը՝ խոստանում էր փոխարէնը թեմիս դանդաղ կողմերից ձրիավարժ գիշերօթիկ սաներ ընդունել։ Պ. Տեսուչը յայտարարեց Խոր-

*) Թէպէտ, նախընթաց տարուայ նման, Հոգաբարձութիւնս իւր այս կալուածքը Արհեստագիտական ծխական դպրոցին 300 ր. չնչին վարձով է տուած, բայց 'ի նկատի ունենալով, որ սոյն դպրոցը նիւթական ապահով վիճակի մէջ չէ և աշակերտները բացառապէս քաղաքիս ազգատ հայ դասակարգից են, որոշել է 300 ր. վարձի փոխարէն Դպրանոցի կարիւոր պատուէրներն այնտեղ տալ և այդ եղանակով ստանալ 300 ր. վարձը։

հրդարանիս, թէ ինքը իւր կողմից արդէն դիմել է նոյն խնդրով մայրաքաղաքների եկեղեցեաց Հոգաբարձու իշխան Արամելիք-Լազարեանին։ Գոհութեամբ ընդունելով պ. Տեսչի սոյն զեկուցումը՝ Խորհրդարանս յանձնարարեց նորան շարունակել սկսած գործը։ Այնուհետև մայրաքաղաքի Հայոց եկեղեցեաց խորհուրդը, թեմիս Սրբազան Առաջնորդի միջոցով Հոգաբարձութիւնից մեր Դպրանոցի վիճակի մասին իւր խնդրած լրացուցիչ տեղեկութիւնները ստանալով՝ որոշեց նպաստի տուչութիւնը առաջուայ 750 ռուբլիից հասցնել տարեկան 3000 ռուբլի, յայտնելով միանգամայն, որ այդ որոշումը վեց տարուայ համար է։

Բացի այս Հոգաբարձութիւնս Տ. Նախագահողի առաջարկութեամբ որոշեց դիմել Գերապատիւ Առաջնորդին՝ խնդրելով Նորին Բարձ Սրբազնութեան պատկանաւոր անօրէնութիւնը, որպէս զի՝ ա. քաղաքիս Ս. Խաչ Վանքը տարեկան 300 ր. նպաստ տայ Դպրանոցիս, որ այդ գումարով հնարաւոր լինի վանքի մօտ գտնուած 45 տուն դպրոցազուրկ հայ ժողովրդից մի գիշերօթիկ սան ընդունել Դպրանոցիս մէջ, բ. Թոփի գիւղի Նորակառոյց Ս. Փրկիչ եկեղեցին, որ ցարդ ազատ է օժանդակութիւն տալուց, տարեկան գէթ 25 ր. հատուցանէ։

գ. Հոգաբարձութիւնս՝ մի կողմից հոգալով Դպրանոցի նիւթական միջոցները աւելացնելու մասին՝ միևնոյն ժամանակ աշխատել է նաև ամենայն հնարաւոր դիւրութիւն տալ չքաւոր կամ նոյն իսկ միջակ կարողութեան տէր մարդկանց իրենց որդուց Դպրանոց տեղաւորելու, որով և ձրիավարժ աշակերտների թիւը տարէցտարի աւելանում է։ Այսպէս, օրինակ, Հոգաբարձութիւնս որոշել է այն մարդկանց համար, որոնք միաժամանակ մի քանի զաւակ ունին Դպրանոցիս օթեւաններում, տարեկան վարձ առնել ոչ 300 ր.

այլ պակաս. այդ իսկ մաքով այս տարի ևս որոշուեցաւ պակաս թոշակ սահմանել ընդհանրապէս քահանաների որդոց համար: Իսկ երթևեկ սաների վերաբերմամբ աւելի ևս դիւրութիւններ կան արուած, այնպէս որ ձրիավարժների թիւը զգալապէս աւելանում է: Եւ որպէս զի հասարակութիւնը մի գաղափար կարողանայ կազմել այդ խնդրի ներկայ կացութեան մասին, անհետաքրքրական չենք համարում այստեղ առաջ բերել Դպրանոցիս վերջին հինգ տարուայ աշակերտների թիւը:

Թուական	Թոշակառու	Ձրիավարժ	Գիշերօթիկ		Թոշակ երթևեկ աշակերտներից	Ծանօթութիւն
			Թոշ	Ձրիավ		
189⁵/₆	126	105	—	—	4000	Ի հաշիւ են առնուած միմիայն երթևեկ աշակերտներից ստացուած թոշակագրամները. գիշերօթիկների տարեկան վարձն է 300 ր. եւրաքանչիւրից.
189⁶/₇	100	157	—	—	3600	
189⁷/₈	91	150	18	16	2828	
189⁸/₉	83	175	25	18	2200	
189⁹/₀	62	182	18	17	1712	
190⁰/₀₁	62	180	24	17	1700	

Արդէն այս ցուցակից պարզ երևում է, թէ ինչպէս մէկ կողմից տարէցտարի աւելանում է հասարակութեանս աղքատ դասակարգի տղայոց թիւը, որոնց մեծ մասը ոչ միայն անկարող են ուսման վարձ տալու, այլ և կարօտ են հանդերձի և դասական պիտոյքների, իսկ միւս կողմից նուազում է թոշակագրամների հասոյթը՝ մեծապէս ծանրանալով Դպրանոցիս առանց այն էլ ոչ բաւարար բիւջէի վերայ: Հոգաբարձութիւնս աշխատում է նաև, եթէ միայն իւր նիւթական միջոցները ներում են, ընդունել ձրիավարժ

գիշերօթիկ սաներ ևս: Բայց ցաւելով պիտի խոստովանինք, որ այդ կողմից խորհրդարանիս արածը շատ քիչ է, որովհետև Դպրանոցիս նիւթականը ամենևին չէ ներում այդ անելու: Սակայն Հոգաբարձութիւնս յոյս ունի, որ մօտիկ տարիներում, երբ կըստացուին նախկին Մարդասիրական ընկերութեան 30000 ր. դրամագլխի շահի կէսը, հանդուցեալ Պաթրեանի կտակած 9000 ր. գումարի ¹/₃ մասը, ներկայումս արդէն ստացուած Պետերբուրգի Հայոց եկեղեցու տարեկան 3000 ր. նպաստը, այլ և վերև յիշուած նոր աղբիւրներն, այն ժամանակ անշուշտ հնար կըլինի գործադրել Հոգաբարձութեանս մի որոշումը, որ շատ կարևորութիւն ունի, այն է՝ թեմիս զանազան կողմերից հաւաքել օտարոտ չքաւոր մանուկներ՝ նոցա ազգային դաստիարակութիւն մատակարարելու համար: Հոգաբարձութիւնս դիտմամբ ծանրանում է իւր հաշուետուութեան սոյն կէտի վերայ այն բարի ցանկութեամբ, որ տեղւոյս հայ հասարակութեան առանձին ուշադրութիւնը հրաւիրելով աղքատ մանուկների վերայ, կարողանայ միջոց տալ նոցա ուսման պապակը յաղեցնելու: Իսկ ուսման ծարաւ չքաւոր մանուկների թիւը մեր քաղաքում խիստ շատ է և Հոգաբարձութիւնս՝ ի նկատի ունենալով այս հանգամանքը՝ Դպրանոցիս երբորդ յարկի կառուցման միջոցին աչքի առաջ է ունեցել նախակրթական դասարանների զուգընթացներ ևս ունենալու կարիքը:

Աւելորդ չի լինիլ այստեղ հրաւիրել մեր բարեգործ հայերի ուշադրութիւնը նաև Հոգաբարձութեանս մի այլ որոշման վերայ: Սովորաբար մեզանում որդեգրների ընդունելութիւնը բոլորովին պատահական կերպարանք ունի. շատ անգամ արժանաւոր, ընդունակ և միևնոյն ժամանակ աղքատութեան ճիրանների մէջ տառապող ուսումնատենչ մանուկներ անօգնական մնալով՝ զրկվում են ուսում առնե-

ու հնարաւոր ութիւնից, մինչդեռ շատ ընդունակ երեխաներ՝ ծնողների ճարպիկութեան կամ խնամիութեան շնորհիւ՝ դառնում են զանազան անձանց որդեգիր և, մի քանի տարի իրենց բարերարի խնամքը վայելելուց յետոյ, կորչում են անհետ։ Ահա այսպիսի պատահականութեան առաջն առնելու համար Հոգաբարձութիւնս որոշեց գիշերօթիկ սաներ ընտրելիս առաջարկել Դպրանոցիս մանկավարժական ժողովին կողմել ամենաչքաւոր, բայց առաջադիմելու ընդունակ աշակերտաց ցուցակ, որի միջից և անում է իւր ընտրութիւնը։ Արդէն Հոգաբարձութեանս այս որոշումից օգտվում են նաև մի քանի բարերար անձինք։ Ցանկալի էր, որ այս որոշումով առաջնորդուէին նաև մեր բոլոր բարերարները և այն բարեսիրական հասատատութիւնները, որոնք Դպրանոցիս մէջ սաներ են պահում, որպէս զի գործ դրուած աշխատանքն ու եղած ծախսերը ջուրը չթափուին։

դ. Հոգաբարձութիւնս աշխատելով որքան կարելի է աւելի թուով աշակերտ գրաւել դէպի Դպրանոց, զգում է միևնոյն ժամանակ, թէ որքան ծանր պատասխանատուութիւն կայ իւր վերայ՝ սաների առողջապահութեան և դաստիարակութեան նկատմամբ, ուստի և իւր ժողովներում շատ անգամ խորհրդածութեան նիւթ է դարձրել այդ խնդիրները՝ աշխատելով ըստ կարելւոյն կանոնաւորել մարմնամարզական պարապմունքները, գնելով մարմնամարզական և զուարճութեան պէսպէս գործիքներ ու խաղեր, սարքելով սառցասար, միջոց տալով զբօսանքներ, իսկ այս տարուանից նաև կրթական արշաւանքներ կազմակերպելու՝ թէ քաղաքիս և թէ մերձաւոր քաղաքների գործարանները և ուշադրութեան արժանի վայրերը դիտելու նպատակով։ Սակայն որքան էլ որ Հոգաբարձութիւնս բարի ցանկութիւն ունենար իւր հոգածութիւնը Դպրանոցիս բոլոր աշակերտ-

ների վերայ տարածելու, բայց և այնպէս առ այժմ ստիպուած է իւր խնամքին առարկայ դարձնել գլխաւորապէս գիշերօթիկ սաներին, որովհետև նախ նիւթական միջոցները չկան և երկրորդ՝ Դպրանոցիս բակը չափազանց նեղուածք լինելով բոլորովին կաշկանդած է պահում երեխաներին՝ մանաւանդ վատ եղանակներին։ Դպրանոցս բարեգործ մարդկանց ձեռնտուութեան է սպասում իւր բակն ընդարձակելու համար։ Հոգաբարձութիւնս առանձին խնամք ունի նաև իւր սաների բժշկական հսկողութեան վերայ, որը բժիշկ պ. Ա. Քէչէկեանի շնորհիւ գոհացուցիչ դրութեան մէջ է գտնուած միշտ, մանաւանդ որ ներկայումս, Երբորդ յարկի կառուցմամբ, Դպրանոցս երկու հիւանդանոց ունի—վարակիչ և սովորական հիւանդների համար և մի առանձին ընդունարան։ Բացի այդ Հոգաբարձութիւնս նախորդ տարուայ նման Դպրանոցի Վարչութեան առանձին ուշադրութիւնն է հրաւիրել տարուայ ընթացքում անառաջադէմ գտնուած աշակերտների վերայ՝ նրանց բժշկական քննութեան ենթարկել տալու համար, ի նկատի ունենալով որ շատ անգամ աշակերտի անառաջադիմութեան իսկական պատճառը նորա ֆիզիկական որ և իցէ պակասութիւնն է լինում։ Եւ այս իսկ նպատակով Հոգաբարձութիւնս երբեք միջոց խնայած չէ իւր սաներին մասնագէտ ակնաբոյժների կամ ականջաբոյժների քննութեան ենթարկելու։ Միևնոյն կերպով Հոգաբարձութիւնս առանձին հոգածութիւն ունի սաների մաքրութեան և առողջաբար սննդառութեան վերաբերմամբ՝ միշտ 'ի նկատի ունենալով Դպրանոցիս Գ. բժշկի խորհուրդներն ու ցուցմունքները։

ե. Հոգաբարձութիւնս մշտապէս հոգալով իւր սաների ողջապահիկ պայմանների մասին՝ կարող չէր աչքից

թողնել նոցա կրթութեան ու դաստիարակութեան գործը ևս, ուստի և առանձին ուշադրութեամբ հետևել է մանկավարժական ժողովի պարապմունքներին ու արձանագրութիւններին, Դպրանոցիս Պ. Ցեսչի ներկայացրած քառորդական և տարեկան հաշիւներին, մանրամասնօրէն քննել ու քննադատել է այդ հաշիւները, հարկաւոր միջոցին լրացուցիչ տեղեկութիւններ ու բացադրութիւններ ուղել աշակերտաց առաջադիմութեան, վարք ու բարքի, յետամնացութեան պատճառների, կարդացած գրքերի, բացակայութեան, ուսուցչաց պարապմանց և այլ կարևոր խնդիրների մասին։ Այլ և հարկաւոր դէպքում Խորհրդարանս մանկավարժական ժողովի քննութեան առաջարկել է զանազան զուտ մանկավարժական բնաւորութիւն կրող խնդիրներ, ինչպէս, օրինակ, քննութիւններն ու վերաքննութիւնները թեթևացնելու, երկրորդ տարին միևնոյն դասարանում մնացած աշակերտներին՝ վերաքննութիւն ունեցած դէպքում՝ ուրիշ ուսումնարան մտնելու համար ժամանակ և հնարաւորութիւն տալու խնդիրները։ Այլ և Հոգաբարձութիւնս՝ շարունակելով նախորդ Հոգաբարձութեան գործը՝ մանկավարժական ժողովին առաջարկել է բարեփոխել Դպրանոցիս երթևեկ աշակերտների համար տարիներ առաջ կազմուած կանոնները, գիշերօթիկ աշակերտների համար նոր կանոններ մշակել, սահմանել պատժողական և առհասարակ կարգապահական ընտրելագոյն միջոցներ, գրադարանից օգտուելու նոր կարգ յօրինել և այլն։ Բացի այս 'ի նկատի ունենալով որ մանկավարժական պահանջների համաձայն ամեն տարի թէպէտ թեթև, բայց և այնպէս նորանոր փոփոխութիւններ են տեղի ունենում աւանդուած առարկաների ծրագրի մէջ՝ Խորհրդարանս առաջարկել է Ցեսչութեան ներկայացնել իրեն մինչև օրս եղած բոլոր յաւելումները և յապաւումները՝ Ազգիս Վեհափառ Հայրապետի բարեհաճ տնօրէնութեան մատուցանելու համար։

Նոյն այդ նպատակով Հոգաբարձական խորհուրդը որոշեց Դպրանոցում աւանդուող առարկաները ուսուցիչների մէջ բաշխելիս 'ի նկատի առնել առարկայական սիստեմը, որով բաւական նպաստեց դասատուութեան առաջադիմութեան. այսպէս, օրինակ, Ռուսաց և Հայոց լեզուն, որ բաժան բաժան էին եղած 4-4 ուսուցիչների մէջ, այժմ կեդրոնացած են, որքան հնարաւոր եղաւ այդ, թուով պակաս դասատուների ձեռքին։ Միևնոյն կերպով նաև միւս առարկաները։ Այս եղանակով Հոգաբարձութիւնս կարողացաւ ուսուցչական որոշ շատ կազմակերպել և յոյս ունի՝ ապագայում ևս յարմարաւոր դէպքից օգտուելով՝ վերջնօրէն ձևակերպել այդ շատ կարևոր գործը։

գ. Հոգաբարձական խորհուրդը յատուկ ուշադրութեան առարկայ է դարձրել նաև դպրոցական-աշակերտական հանդէսները, որոնցից երկուսը՝ Դպրանոցիս տարեդարձի օրն ու Ս. Վարդանանց տօները՝ առանձին շքով է կատարվում—երաժշտութեամբ, գրական երեկոյթով, պարերով, ներկայացումով. մնացեալ հանդէսներն աւելի ընտանեկան կերպարանք են ունեցել։ Ցիշեալ երկու հանդէսներին սովորաբար հրաւիրուած են եղել քաղաքիս բոլոր հայոց դպրոցների ուսուցիչներն ու ուսուցչուհիները, որպէս նաև մի երկու դպրոցների աշակերտուհիները, Դպրանոցիս բարերարները, քաղաքիս վարիչները, ազգային բարեգործական հաստատութեանց ղեկավարները, եկեղեցեաց քահանաները ու երեցփոխանները, այնպէս որ Դպրանոցս մի տեսակ միացուցիչ կապ է հանդիսացել տեղական ազգային ուսումնարանների և հասարակութեանս այլ և այլ

դաւակալքերի մէջ։ Թէպէտ Հոգաբարձութիւնս հոգով չափ կը ցանկանար այդ հանդէսներին իւր յարկի տակ տեսնել այն բոլոր անձանց, որոնք հետաքրքրվում են մեր Դպրոցների կեանքով, սակայն՝ աչքի առաջ ունենալով Դպրանոցիս շէնքի նեղուածք լինելը՝ ակամայ ստիպուած է եղել որքան կարելի է ընտանեկան և սահմանափակ բնաւորութիւն տալ իւր հրաւէրներին։ Իսկ ներկայումս, երբ արդէն Դպրանոցիս շէնքը բաւականաչափ ընդարձակուած է, Հոգաբարձութիւնս միշտ ուրախ կը լինի տեսնել իւր յարկի տակ տեղւոյս հայ հասարակութեան անդամներին անխտիր՝ դպրոցական ամեն տեսակ հանդէսներին։

Դպրոցական հանդէսներին աշակերտները ոչ միայն կարդացել և արտասանել են զանազան ինքնուրոյն ու պէսպէս հեղինակների գրուածքներ թէ հայերէն և թէ ռուսերէն լեզուներով, այլ և նուագել են գործիներ, որ ապացոյց է աշակերտների մէջ եղած երաժշտական հակումն ու ճաշակը զարգացնելու կարևորութեան։ Եւ այդ 'ի նկատի ունենալով Հոգաբարձութիւնս քանիցս մասնաւոր խորհրդածութիւն է ունեցել՝ Դպրանոցում երաժշտութեան դասեր մտցնելու կարևորութեան մասին, բայց միշտ էլ ընկրկել է իւր նիւթական սուղ միջոցների հանդէպ։ Դպրանոցս նոյն իսկ մի կարգին դաշնամուր չունէր, որ անհրաժեշտ էր երգեցողութեան դասերի համար. միայն պ. Գրիգոր Խնձորեանի ջանքով կազմուած համերգից մնացած գումարը նըպաստեց մասամբ նոր դաշնամուր ունենալուն։

է. Հոգաբարձութիւնս մշտապէս հոգ ունենալով իւր սաների բարւոք դրութեան մասին, անուշադիր չէ թողել նաև Դպրանոցիս ուսուցիչների վիճակը։ Այսպէս՝ Դպրանոցիս ծերունազարդ հայկական ուսուցիչ Գէորգ Խաչատրեանը թողեց իւր ուսուցչութեան պաշտօնը և Խորհրդարանս

'ի՛ արդանս և 'ի տրիտուր նորա երկարամեայ ծառայութեան՝ թեմիս Դեր. Առաջնորդի հաճութեամբ՝ տարեկան 300 ր. կենսաթոշակ կապեց նորան։ Այլ և՝ նկատի ունենալով վերակացուական պաշտօնի ծանրութիւնը՝ 480 ր. փոխանակ՝ տարեկան վեցհարիւրական ռուբլի ռոճիկ սահմանեց վերակացուներին։ Բացի այս Դպրանոցիս վերակացութեան պաշտօնից հեռացած պ. Մ. Տէր-Թադէոսեանին տուաւ միանուագ 200 ր. նպաստ։ Հոգաբարձութիւնս խորհրդածութիւն է ունեցել նաև միւս ուսուցիչների վիճակի մասին և սկզբունքով որոշել է աւելացնել նախակրթարանների դասատուների դասագինը, կազմել ուսուցիչների համար օգնութեան դրամարկղ և այլն, բայց առ այժմ դոցա իրագործումը յետաձգած է, մինչև որ իւր նիւթական դրութիւնը բարելաւուի։

ը. Սակայն Հոգաբարձութեանս մատանջութեան առանձին առարկան եղած է Դպրանոցիս շէնքի ընդարձակումը։

Դեռ ևս տարիներ առաջ—1889 թ. հոկտ. 27-ի հոգաբարձական ժողովում—կարդացվում է Սրբազան Առաջնորդի մի առաջարկութիւնը, թէ՝ որպէս զի Դպրանոցս իւր բուն կոչման ծառայէ և կարող լինի պատսպարել իւր մէջ նաև թեմի զանազան կողմերից հաւաքուած ուսումնածարաւ մանուկներ, անհրաժեշտ հարկաւոր է գիշերօթիկների բաժին բանալ Դպրանոցում։ Թղթատարն այնքան գրաւիչ էր և նպատակայարմար, որ այն ժամանակուայ Հոգաբարձական խորհուրդը՝ չնայելով իւր սահմանափակ միջոցներին՝ որոշում է յանձնարարել քաղաքային ճարտարապետին, որպէս զի Դպրանոցիս շէնքին աւելացնելու նոր շէնքի համար նախագիծ ու կանխահաշիւ կազմէ։

Յաջորդ տարին յատակագիծն արդէն պատրաստ է

լինում, իսկ 1892 թ. Մարտի 6-ի ժողովում Հոգաբարձութիւնը վաւերացնում է Դպրանոցիս գլխաւոր շինութեան շարունակութիւնը կազմող նորակառոյց շէնքի 14334—78 կ. ծախքը։ Բայց որովհետև Դպրանոցի նիւթական միջոցները չեն ներում լրացնել շինութեան մնացեալ կարևոր թերութիւնները, ուստի գիշերօթիկների բաժին բանալու խնդիրը մնում է առկախ, մինչև որ 1896 թ. Հոգաբարձութիւնը վերստին 8,579—10 կ. ծախսելով՝ համեմատաբար պիտանի է դարձնում Դպրանոցիս շէնքը գիշերօթիկ բաժին բանալու համար, որ և բացվում է յաջորդ 1897 թուին. այդ միջոցներին է, որ յաւիտենական յիշատակաց արժանի հանգուցեալ Խաչերես աղա Տիաչքեանը Դպրանոցի անունով կտակում է 100000 ռուբլի, որի տոկոսիքով գլխաւորապէս կենդանի է մեր Դպրանոցի գիշերօթիկների բաժինը։

Սակայն Դպրանոցի գլխաւոր շէնքն ի սկզբանէ միջնակարգ Դպրոցի յարմարութիւններ չունենալով՝ մօտ 23000 ր. բաւական խոշոր գումարը կրկին նուազ վերան ծախսուելուց յետոյ ևս մեծամեծ թերութիւններ ունէր. արդէն 1898 թ. Հոգաբարձութիւնը որոշում է հիւանդանոցի նորոգութեան համար ծախսել այլ ևս 700 ռուբլի, իսկ նոյն այդ տարուայ Փետրուարի ժողովում յարուցվում է Դպրանոցիս երրորդ յարկը շինելու կամ շէնքն աւելի ևս ընդարձակելու խնդիրը։ Եւ արդարև, շէնքը թէև բաւական ընդարձակ էր, բայց ներկայացնում էր այնպիսի անյարմարութիւններ, որ ամենևին տանելի չեն բարեկարգ Դպրոցում։ Այստեղ Խորհրդարանս միանգամայն աւելորդ է համարում մի առ մի յիշատակել այն բոլոր անյարմարութիւններն ու թերութիւնները, որ նկատվում էին Դպրանոցական տան մէջ. բաւական է յիշատակել այստեղ միայն մի-երկուսը.—դասարանները այնքան նեղուածք էին, որ ա-

շակերտներին՝ մանաւանդ պատրաստականներում՝ նստելու տեղ չկար. ոչ մի օդանցք կամ օդափոխ կարող չէր բաւարար չափով մաքրել դասարանների ապականուած օդը կարճատև դասամիջոցներին։ Նոյն իսկ նախակրթարաններից մէկի համար երկրորդ յարկում յարմարաւոր սենեակ չկար և դա զետեղուած էր ներքին յարկում, որ զրկուած էր և՛ լուսից և՛ մաքուր օդից։ Ներքին միջանցքը բոլորովին խաւար էր և հնարաւորութիւն չկար փակուած օդը փոխելու, թարմացնելու։ Վերի, այսինքն՝ երկրորդ յարկում զետեղուած էին և՛ դասարանները և՛ ննջարանները. վերջինները բռնած էին Դպրանոցի հանդիսարանը, այնպէս որ մի վայելուչ սենեակ չկար հիւր ընդունելու։ Խաղասրահը այնքան փոքր էր ու նեղուածք, որ աշակերտների հաղիւ երրորդ մասը կարող էր այնտեղ տեղաւորուել, ուստի և դասամիջոցներին կայտառ, շարժման կարօտ մանուկները մրջիւնի պէս խռնվում էին միջանցքում և հաղիւ կարողանում էին շարժուել։ Երկրորդ յարկը տանող աստիճանները շէնքի մի ծայրից լինելով՝ թէ անյարմար էր և թէ մանաւանդ վտանգաւոր հրդեհի տեսակէտից։ Այս այսպէս լինելով մաքրութիւն և կարգ պահպանելը ևս բնականաբար դժուար լուծանելի խնդիր էր Դպրանոցի վարչութեան համար։ Գիշերօթիկները չունէին յատուկ սերտարան, աշակերտների համար չկար նկարչութեան և երգեցողութեան համար որոշ դասարան։ Դպրանոցիս Տեսչութիւնը չունէր ընդունարան, զրաղարանն ու բնագիտական թանգարանը զետեղուած էր մի սենեակի մէջ, որ մեծապէս խանգարում էր թէ դասատուութեան և թէ կարգապահութեան։ Եւ այսպիսի անյարմարութիւններ անհամար էին, որով և դպրանոցական տան ընդարձակումը կամ երրորդ յարկի կառուցումը անխուսափելի անհրաժեշտութիւն

(13124)
35440-56
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ԱԳԻ.ՍՍՀ
Ա. Մեսրոպի անվան

էր դարձած խորհրդարանիս համար։ Բայց դժբաղդաբար Հոգաբարձութիւնը հնար չունէր գործին ձեռնարկելու, որովհետև փող չկար։ Եւ Հոգաբարձութիւնը կազմելով Գալբանոցի կառուցանելի երրորդ յարկի յատակագիծը, դիմում է նախ տեղիս Մարդասիրական Ընկերութեան և ապա՝ Բարեգործական Ընկերութեան՝ խնդրելով 15000 ր. նպաստ տալ իրեն՝ մտադրուած շինութիւնը 'ի կատար ածելու համար։ Գործն այդպէս էլ մնում է։

Ներկայ Հոգաբարձական մարմինը նոյնպէս տեսնելով վերոյիշեալ անյարմարութիւնները և միտքը դրած լինելով շարունակել նախորդ Հոգաբարձութեան բարի դիտաւորութիւնները, որ վերաբերում էին երրորդ յարկի կառուցման խնդրին, քանիցս խորհրդածութիւն ունեցաւ այդ մասին և ահա՝ սոյն 1901 տարուայ Յունուարի 25-ի ժողովում խորհրդարանիս Նախագահող Տէր-Մուշէ վարդապետը կրկին յարուցանում է այն խնդիրը՝ յայտնելով միանգամայն, որ Բարեգործական Ընկերութեան խորհուրդը՝ իւր լսածովը, որոշել է նպաստել շինութեանը, եթէ Հոգաբարձութիւնս իւր ունեցած միջոցներով գործին ձեռնամուխ լինի։ Այդ դեկուցման հիման վերայ Հոգաբարձութիւնս որոշեց դիմել Բարեգործական Ընկերութեան Արգոյ խորհրդարանին, որից Փետրուարի 26-ին, թ. 63 գրութեամբ, տեղեկութիւն ստացաւ, թէ արդարև Բարեգործական Ընկերութիւնը որոշել է նպաստել շինութեան։ Այնուհետև Հոգաբարձութիւնս վերստին դիմեց յիշեալ ընկերութեան իմանալու, թէ ինչ չափով Բարեգ. Ընկերութիւնը պիտի բարեհաճի նպաստամատոյց լինել երրորդ յարկի կառուցման,—առ որ Ապրիլի 5-ին, թ. 71 գրութեամբ պատասխան ստացաւ, թէ Ընկերութեան ընդհանուր ժողովը որոշել է նպաստ տալ 10000 բուբլի այն պայմանով, որ 'ի յա-

ւիտեանս ժամանակայ Բարեգործ. Ընկերութիւնը երկու ձրիավարժ գիշերօթիկ սան ունենայ Գալբանոցումս իւր ընտրութեամբ։

Խորհրդարանս շնորհակալութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը և անմիջապէս կարգաւորեց ձեռնարկել շինութեանը, որի հսկողութիւնը յանձնուեց շինարար մասնաժողովին. այս մասնաժողովի անդամներ ընտրուեցան պ. պ. Գրիգոր Խնձորեան, Մանուկ Գօլով, Գեորգ Զորայեան և Տեսուչ պ. Գալուստ Զարիխեան։ Երրորդ յարկի շինութեան ամբիւ Հոգաբարձութիւնս այլ ևս չորս ժողով է ունեցել, որոնց՝ բացի պ. Տեսչից՝ ներկայ են եղել երբեմն նաև պ. օգնականը, մի քանի ուսուցիչներ և քաղաքային ճարտարապետը, որոնք իրենց բարի խորհուրդներով մեծապէս նպաստեցին գործին, մանաւանդ պ. Խ. Յուսիկեանը, որ նեղութիւն էր կրել կազմելու առանձին յատակագիծ երրորդ յարկի համար։ Նոյն իրկ խնդրի քննութիւնը Հոգաբարձութիւնս յանձնած լինելով նաև Գալբանոցիս Մանկավարժական խորհրդին՝ 'ի նկատի է ունեցել նաև դանազան մանկավարժական պայմանները, որոնք արդէն 1898 թ. ևս մանկավարժական ժողովի մանրամասն խորհրդածութեան նիւթ եղած լինելով՝ Հոգաբարձութիւնս դիւրութիւն ունեցաւ առաջնորդուելու այդ ցուցմունքներով և ըստ այնմ հաստատեց երրորդ յարկի կառուցման յատակագիծը և երկրորդ յարկի սենեակների դասաւորութիւնը։ Շինութեան յատակագիծ պատրաստելն ու կառուցման հսկողութիւնը յանձնուեցաւ քաղաքային ճարտարապետ պ. Դուրբախեանին. իսկ շինութեան այլ և այլ մասերը աճրդով տրուեցան հմուտ վարպետների և մասնագէտների։ Շինարար յանձնաժողովը ձեռք զարկեց երրորդ յարկի կառուցման ուսումը վերջանալուց յետոյ իսկոյն եթէ

այն է Մայիսի 20-ին, և Խորհրդարանիս անդամ Մեծարգոյ պ. Գրիգոր Խնձորեանի տոկուն աշխատանաց և գովանի եռանդի շնորհիւ շինութիւնը պատրաստ եղաւ որոշեալ ժամանակին, այնպէս որ Սեպտեմբերի կէսերին կարելի եղաւ դասերը սկսելու։

Հոգաբարձութիւնս յայտնելով իւր խորին շնորհակալութիւնը Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցիների խորհրդին, տեղւոյս Բարեգործական Ընկերութեան մեծարգոյ անդամներին, այլ և պ. պ. Գրիգոր Խնձորեանին, Գալուստ Զարիխեանին, Խ. Յուսիկեանին, բժ. Ա. Քեչեկեանին իրենց մատուցած ձրի ծառայութեան և կրած նեղութեան համար թէ ընդհանրապէս Դպրանոցի կառավարութեան և թէ մասնաւորապէս երրորդ յարկի կառուցման ծանր գործին՝ կը ցանկանար, որ առհասարակ մեր հայ հասարակութիւնը և մանաւանդ սորա ունևոր և հասկացող դասակարգը— աւելի քաղցր նայէր ազգային այս հաստատութեան վերայ և ամեն կերպ նպաստէր սորա բարգաւաճմանը և յարատևութեանը։

Հոգաբարձութիւնս իւր շնորհակալութիւնն է յայտնում նաև պ. Դանիէլ Ունանեանին, որ երրորդ յարկի կառուցման համար նուիրաբերեց 1000 ր., պ. Գէորգ Կորոտկեանին, (որի ձեռքով ստացուած է 550 ր. Մոսկուաբնակ մեր հետևեալ ազգայիններից—Գ. Կորոտկեանից, Ա. Մասլովից, Գ. Խլիեանից, Պոպովեան եղբայրներից, Յ. Բոստանջեանից, Կ. Մորթածեանից, Խամաճեան եղբայրներից, Կ. Թամանցեանից, Կողոտեան եղբայրներից, Մկրտ. Պոպովից և Մին. Պոպովից), պ. Գալուստ Զարիխեանին և Դանիէլ Ունանեանին (որոնք միասին հանգանակել են 185 ր- Ռոստովի մեր հետևեալ ազգայիններից—Խուտավերտեան եղբայրներից, Անպէտքեան—Ունանեանից, Քիստեան—

Ակռայեանից, Ամիրեանից, Մ. Դուլիեանից, Լալազարեան եղբայրներից, Աւետեան եղբայրներից, Աղախանեան եղբայրներից, Բ. Եաղուբեանից, Տէր-Յարութիւնեանից, Թադէոսեանից, Թումանեանից, Ղազարեանից, Բեշկենեանից և Քոչարեան—Ֆրանցեանից և պ. Գրիգոր Խնձորեանին, որի առաջարկութեամբ 43 ր. 52 կ. զեղչել են իրենց հաշիւներից հետևեալ անձինք—Մերժանեան Յ. Զորշոփեան Մ. Տարասով, Դուրարեով, Սուրաշեանց Գ. Մենէս և Աւագեան Զ.

Այստեղ աւելորդ չէ համարում Հոգաբարձութիւնս յարակցել երկու պատկեր, որոնցից մէկը վերաբերում է երրորդ յարկի և միւս վերաշինութիւնների հաշուին, հատուցուած գումարներին և մնացած պարտքին, իսկ միւսը Դպրանոցիս 1900-1901 տարուայ մէջ եղած ելումուտքի հաշուին։

Դպրանոցիս ուսումնական ընթացքի մասին գաղափար կազմելու համար՝ Հոգաբարձութիւնս կարեւոր է համարում մէջ բերել այստեղ Դպրանոցիս Մեծ. Տեսուչ պ. Գ. Զարիֆեանի մատուցած անցեալ 1900-1901 ուսումնական. տարուայ վերաբերեալ տեղեկագիրը։

Համառօտ տեղեկագիր Տեսչի

Ն.-Նախիջեւանի Հայոց Թեմական Դպրանոցի 1900-1901 դպրոցական տարուայ ուսումնական վիճակի մասին.

Կնքելով 1900-1901 դպրոցական տարին,—այսու պարտք եմ համարում ներկայացնել յարգելի Հոգաբարձութեանդ բարեհաճ ուշադրութեան Դպրանոցիս ուսումնական վիճակին վերաբերեալ համառօտ տեղեկագիրս։

Անցեալ 1900-1901 ուսումնարանական տարուայ սկիզբը, նորեկ աշակերտների ընդունելութիւնից և Օգոստոսի քննութիւններից առաջ, աշակերտների ընդհանուր թիւն էր 235. Օգոստոսի և Սեպտեմբերի մէջ քննութեամբ ընդունուեցան զանազան դասարաններ 55 հոգի և ընդհանուր թիւը հասաւ 290-ի։ Առաջին կիսամեակում ընդունուեցան այլ ևս 2 հոգի, երկրորդ կիսամեակում այլ ևս 3 հոգի. տարուայ ընթացքում մասամբ հիւանդութեան, մասամբ ընտանեկան զանազան պատճառներով, մասամբ ուրիշ դպրոցներ տեղափոխուելու համար դուրս եկան դպրոցից 10 հոգի, և աշակերտների թիւը տարուայ վերջը՝ քննութիւններից առաջ, դադարեց 285-ի։ Այս թուից 249 հոգի երթևեկ էին, մնացեալ 41-ը՝ գիշերօթիկ։ Գիշերօթ. 15-ը Խաչերես աղայ Դեաչքովի սաներ էին, 1-ը բժ. Գ. Տիգրանեանի, 2-ը Վարդերես աղայ Ախշիեանի, 1-ը Գաբրիէլ աղայ Եղեկեան—Մելքոնեանի, 1-ը տիկ. Աքիմեանի՝ ի յիշատակ բժ. Կ. Խալիպեանի, 2-ը Արմաւրի Բարեգործական Ընկերութեան, 2-ը Ղզլարի Հոգեոր Կառավարութեան և մնացեալ 17 հոգին թոշակաւորներ։ 249 երթևեկներից 62 թոշակաւոր էին, 187 ձրիավարժ։ Թոշակաւորներից 6-ի ուսման թոշակը վճարում էր տեղւոյս Բարեգործական Ընկերութիւնը։ Բացի դորանից երկու սան ունէր նաև մեծ. պ. Քերովբէ Պոպով։

Հաշուեառութեան տարում Դպրանոցը նախորդ տարիների նման, ունէր 3 պատրաստական և 6 Դպրանոցական դասարաններ, որոնց մէջ աշակերտները զետեղուած էին հետևեալ կերպով.

Ա. Պատրաստականում . . .	46	աշակերտ.
Բ. ,, . . .	56	,,
Գ. ,, . . .	56	,,
3 Պատրաստականներում ընդամենը	158	աշակերտ.
Ա. դասարանում	47	,,
Բ. ,, ...	25	,,
Գ. ,, ...	22	,,
Դ. ,, ...	19	,,
Ե. ,, ...	9	,,
Զ. ,, ...	10	,,
Դասարաններում ընդամենը	132	աշակերտ.
Պատրաստականներում	158	,,
Դպրանոցի աշակերտ. ընդհ. թ.	290	հոգի.

Աշակերտների գլխաւոր կոնտինգենտը կազմում էին տեղացիք, որ թուով 190 էին, մնացեալ թուից 32 հոգի գիւղացիք էին և 68 հոգի օտար քաղաքացիք։

Աշակերտների յառաջադիմութեան աստիճանի մասին ճիշտ գաղափար տալու համար հարկ եմ համարում մէջ բերել հետևեալ աղիւսակը.

Դասարան-ները.	Աշակ. թ.	Փոխադրուած են.	Մնացել են.	Արձակուած են.	
				Յօժարակամ.	Մանկ. ժ. որոշմամբ
Ա. Պատրաստ.	47	35 — 74½%	9—17½%	1—2⅔%	2—5⅓
Բ. ,,	56	32—57%	19—34%	1—2%	4—7%
Գ. ,,	56	28—56%	18—30%	6—11%	“
Ա. դասարան	45	27—60%	15—33⅓%	“	3—6⅔
Բ. դաս.	25	12—50%	11—44%	1—4 %	1—4%
Գ. դաս.	23	16—69%	3—13%	1—5 %	3—13%
Դ. դաս.	19	13—68½%	6—31½%	,,	,,
Ե. դաս.	9	9—100%	,,	,,	,,
Զ. դաս.	10	10 աւ. 100%	,,	,,	,,
	290	182—65%	81—28%	10—4%	17—6%

Այս տեղեկութիւններից երևում է, որ աշակերտների ընդհանուր թուից (290) փոխադրուած են հետևեալ դասարանները 182 հոգի հաշուելով դոցա մէջ և 10 հոգի աւարտողներին, որ կազմում է 65%, մնացել են նոյն դասարաններում 81 հոգի, որ կազմում է 28%, արձակուած են յօժարակամ 10 հոգի կամ 4% և մանկավարժական ժողովի որոշմամբ արձակուած են 17 հոգի կամ 6%:

Ինչ որ վերաբերում է գիշերօթիկ սաներին, նոցա մասին աւելորդ չեմ համարում հաղորդել հետևեալ տեղեկութիւնները.

Գիշերօթիկների ընդհանուր թիւը հաշուեցութեան տարում 41 էր. դոքա զետեղուած էին դասարաններում

հետևեալ կերպով.

Ա. Պատրաստականում 4 հոգի, ամենքն էլ փոխադրուած Միջին Նախակրթարան (Բ. Պատրաստական).

Բ. Պատրաստականում 3 հոգի, ամենքն էլ փոխադրուած Գ. Պատրաստական:

Գ. Պատրաստ. 6 հոգի, ամենքն էլ փոխադր. Ա. դասարան:

Ա. դասարանում 8 հոգի, որոնցից 7 փոխադրուած, 1-ը մնացած. Բ.դասար. 2 հոգի, երկուսն էլ փոխադրուած Գ. դասարանում 7 հոգի, որոնցից 5-ը փոխադրուած Դ. դասարան, 1-ը մնացած նոյն դասարանում, 1-ն էլ արձակուած անյառաջադիմութեան համար:

Դ. դասարանում 6 հոգի, ամենքն էլ փոխադրուած Ե. դասարան: Ե. դասարանում 2 հոգի, 2-էլ փոխադրուած Զ. դասարան. Զ. դասարանում 2 հոգի, 2-ն էլ աւարտած ուսման ընթացքը: Այդպիսով 41 հոգուց փոխադրուած են բարձր դասարաններ 38 հոգի, մնացած են նոյն դասարաններում 2 հոգի և արձակուած է 1-ը: Փոխադրուածները կազմում են 92½%, մնացողները 5 և արձակուածը 2½

Ինչպէս արդէն յիշեցինք, գիշերօթիկներից 15-ը Դեաչքովի սաներ էին, 2-ը Սրմաւրի Բարեգ. Ընկեր., 2-ը պ. Աիշիեանի, 1-ը բժ. Գ. Տիգրանեանի, 1-ը բժ. Կ. Խալիպեանի, 2-ը Ղզլարի Հոգևոր Կառավարութեան և 1-ը Մելքոնեան—Եղեկեանի, իսկ մնացեալ 17-ը մասնաւոր թոշակաւորներ: Բարերարների սաները յատկապէս Ն. Նախիջևանցիք և գիւղացիք էին (11 Ն. Նախիջևանցի և գիւղացի) այլև 2-ը Թեմից և 5 օտար քաղաքացիք: 17 գիշերօթիկ մասնաւոր թոշակաւորներից 10 հ. Կուբանի նահանգի քաղաքներից և գիւղերից, 1-ը Ն. Նախիջևանցի (երկրորդ կէս տարուանից մտած), 1-ը գիւղացի, 1-ը Մելիտոպոլցի, 1-ը Ախալցխացի և 3-ը Ղզլարցի:

Նախորդ տարիների նման աշակերտները ամեն կիրակի, եկեղեցական, կայսերական և ազգային տոներին դասարակ վերակացուների ուղեկցութեամբ յաճախել են եկեղեցի, այլ և խոստովանուել ու ճաշակուել են Ս. Լուսաւորչի տօնի շաբաթը։

Անցեալ տարի աշակերտների մէջ բարերաղդաբար ծանր և վարակիչ հիւանդութեան դէպքեր չեն պատահած, այլ եղել են սովորական թեթև հիւանդութիւններ, որ դպրոցիս մեծ. պ. բժիշկը ամենայն խնամքով բուժել է իւր ժամանակին։ Հիւանդանոցս անցեալ տարի ունէր մշտական հսկող հիւանդապահ մի կին, որ բաւական հմուտ էր իւր գործին և, պ. բժշկի ցուցմունքներով, խնամում էր հիւանդներին։

Աշակերտների կարգապահութեան մէջ անցեալ տարի ես նկատելի էին շատ թերութիւններ, որ տարիների ընթացքում միայն կարող են ուղղուել. այդ թերութիւնների գլխաւոր պատճառը ծնողների և խնամակալների անտարբերութիւնն է, որի հետ և մաքառում էր Դպրանոցի վարչութիւնը իւր ձեռքն եղած միջոցներով։ Ծնողներին յաճախակի դպրոց հրաւիրելով՝ վարչութիւնս ստիպուած է եղել բացատրել նոցա իրենց ծնողական պարտականութիւնները և պահանջել, որ ժամանակին դպրոց ուղարկեն, մաքուր պահեն, դասերից մնալու պատճառ չդառնան և այլն։ Համոզուած լինելով, որ այդ անտարբերութեան առաջն առնելու համար լաւ կ'լինէր հետաքրքրել նոցա դպրոցական կարգերով, վարչութիւնս յատկապէս սարքել է 2 երեկոյթ, որին հրաւիրուած են եղել նաև աշակերտաց ծնողները, բայց դժբաղդաբար շատ սակաւ է եղել յաճախորդների թիւը։ Այս այսպէս լինելով հանդերձ՝ վարչութիւնս պարզ նկատում է, որ տարէցտարի կանոնաւորվում է

կարգապահութեան գործը։

Անցեալ 1900-1901 ուսումն. տարուայ ընթացքում կազմուել են մանկական առաւօտներ և երեկոյթներ, աշակերտական ներկայացում է տրուել Տարեդարձի տօնի առթիւ և ցոյց են տրուել պատկերներ մոգական լապտերներով. կատարուել են 4 աշակերտական զբօսանք՝ 3-ը բնական պատմութեան ուսուցչի առաջնորդութեամբ և դասարակների ուղեկցութեամբ։ Յիշեալ աշակերտական հանդէսները կատարուել են նախորդ տարիների նման Վեհափառ Հայրապետի Ս. Օծման տարեդարձի և Անուանակոչութեան առթիւ, Ս. Թադէոս և Բարդուղիմէոս Առաքելոց տօնին, Ս. Վարդանանց, Ս. Գրիգոր Լուսաւորչի տօներին և վերջապէս Դպրանոցի տարեդարձի օրը, ընդամենը տարեկան վեց հանդէս։ Բացի այս սովորական հանդէսներից մի ձեռնածու Դպրանոցի դահլիճում աշակերտների համար յատկապէս տուել է մի ներկայացում և մի ուրիշ պարոն ցոյց է տուել շարժական պատկերներ Սրբազան Պատմութիւնից, այլև բնապատմական, պատմական և աշխարհագրական բովանդակութեամբ։

Հաշուետուութեան տարում դպրանոցական 6 դասարանների ընթացքն աւարտեցին 10 հոգի.

1. Այտինեան Վարդան—գիւղացի, մտել է Ա. դաս. 1895 թ.
2. Դեմիրեան Արէլ—գիւղացի, մտել է Բ. դաս. 1896 թ.
3. Դաշտեմուրեան Գարեգին—Ղզլար. մտել է Գ.դ. 1895 թ.
4. Խոնդուրեան Սարգիս—Ն. Նախիջևանցի, մտել է Ա. Նախ. 1892 թ.
5. Սամուէլեան Մինաս Ղզլարեցի, մտել է Ա. դաս. 1895 թ.
6. Սողոմոնեան Խաչեղբայր—գիւղացի, մտել է Ա. դ. 1895 թ.
7. Սրապիոնեան Սարգիս—գիւղացի, մտել է Ա. դ. 1895 թ.
8. Վարդերեսեան Մելքոն—Ն.-Նախիջևանցի, մտել է Ա. Նախ. 1890 թ.
9. Քեչեկեան Յովհաննէս Ն.-Նախիջևանցի, մտել է միջ. Նախ.
10. Օրսենտեան Գալուստ—Ն. Նախիջ. մտել է Ա. Ն. 1887 թ.

Ուսուցչաց և նոցա պարապմանց մասին հարկաւոր

№№	Անուն և ազգանուն	Ո՞ր դպրոցում է աւարտել
1	Պ. Գ. Զաբելեան, Տեսուչ	Մոսկուայի Համալս.
2	„ Վ. Քիբլեան, Օգն. Տեսչի	Մոսկ. Համալս, 2 ընթց.
3	„ Ս. Զամբենեան	Գիմնազ. Ռեմ մասն. բժ.
4	Գ. Սարի. Զիմբիչեան	Գ. Ռեմ. մասն. բժ.
5	Պ. Ե. Շահազիզ.	Լաղ. Ռեմ. լեկիան.
6	„ В. Антоновъ	Մոսկ. Համալս.
7	„ Ի. Թանեզեան	Մոսկ. Համալս.
8	„ Ս. Բաբեեան	Օդեսսայի Համալս.
9	„ Յ. Բայբուրդ	Մոսկ. Համալս.
10	„ Ի. Զուբաբեան	Օդեսայի Համալս.
11	Գ. Ք. Քելլե-Շահենեան	Գ. Ռեմ. մասն. բժ. 2 ընթ.
12	Պ. Յ. Ցիրակիրեան	Գ. Ռեմ. մասն. բժ.
13	„ Ս. Սմբատեան	Ուսուցչ. Սեմին.
14	„ Խ. Յուսիկեան	Պետերբ. Գեղ. Ռեմ
15	„ Ս. Զաթալպաշեան	Ն. Նախ. Թեմ. դպր.
16	„ Ծ. Զուբաբեան	Գ. Ռեմ. դպր. բժ.
17	„ Յ. Գենջեան	Ն. Նախ. Թեմ. դպր.
18	„ Մ. Տ. Թադիոսեան.	Նուխու. Հոգ. դպր.

եմ համարում հաղորդել հետեւեալ տեղեկութիւնները.

Ի՞նչ առարկայ է աւանդ.	Տարեկան դասերի թիւը	Տարեկան դասերի թիւը	Ամբողջ է դասերից բաց թողած	Քանի՞ տարի
Լատին լեզու.	323	348.	25.	4.
Ընդհ. պատմութ.	344.	348.	4.	63.
Աստուա. Եկ. պատմ. մասնե. և Հայոց լեզու	739.	754.	15.	—
Կրօն և Զայնագրք.	501.	522.	21.	—
Հայ. լ. Աշխ. և Հ. պատմ	757.	783.	26.	—
Ռուսաց լեզու	201.	203.	2.	—
Ռուս. և Ֆրանս. լ.	632.	667.	35.	—
Ռուս. և Լատ. լ.	742.	812.	70.	—
Մաթեմատիկա.	630.	667.	35.	—
Բնագիտ. Բն. պատմ. և Թուաբ	839.	841.	2.	—
Կրօն	236.	261.	25.	—
Հայոց լ.	551.	551.	—	—
Ռուսաց լ.	159.	174.	15.	27.
Նկարչութ.	172.	203.	31.	—
Վայելչագրութ.	511.	522.	11.	—
Վերակացու թ.	—	—	—	51.
Վերակացու թ.	—	—	—	49.
Ժամեկուսը վերակացու թ.	—	—	—	8·

Ուսուցչաց մասին հաղորդած տեղեկութեանս վերայ հարկ եմ համարում աւելացնել և հետեւեալը.

Անցեալ տարուայ ընթացքում՝ բացի պ. Ծ. Զուրաբեանից՝ վերակացութեան պաշտօն են կատարել պ. պ. Յ. Գենջեան և Ս. Սմբատեան, որ ընտրուած էին այդ պաշտօնի համար ուսուցչաց ժողովից նախկին վերակացուների՝ պ. Յ. Տէրտէրեանի և պ. Յ. Զաքարեանի տեղ: Պ. Գ. Խաչատրեանին, որ երկար տարիներ, իբրև Հայոց լեզուի դասատու բարեխղճօրէն Դպրանոցին ծառայելուց յետոյ, ծերացած լինելով ստիպուած էր հրաժարուել իւր դասերից, Դպրանոցի յարգ. հոգաբարձութիւնը ստանալով առ այդ նախապէս Սրբազան Առաջնորդի հաճութիւնը, տարեկան երեք հարիւր ռուբլի թոշակ կապեց, իսկ նորա դասերը բաժանուեցան Հայ. լ. ուսուցիչների՝ պ. Ա. Զամինեանի և Ե. Զահազիզի մէջ: Պ. Յ. Տէրտէրեանին յանձնուեցան երեք պատրաստականների Հայ լ. դասերը, որ առաջ աւանդում էին Տ. Գ. ք. Քելլէ-Զահինեանը և պ. Ա. Զամինեանը: Հրաժարուեցան նոյնպէս իրենց դասերից պատրաստական դասարանների կրօնուսոյց Ս. ք. Զարիֆեանը և Մաթեմատիկայի ու բնագիտութեան ուսուցիչ պ. Յ. Խամբուրեան. առաջինը հիւանդութեան, երկրորդը տեղւոյս օր. գիմնազիայում նոր դասեր ստանալուն պատճառաւ: Բայց մնացած կրօնի դասերը յանձնուեցան Գ. ք. Քելլէ-Զահինեանին, իսկ թուաբանութ., բնագիտութ. և Բն. պատմութեան դասերի համար հրաւիրուեցաւ Զուչու թեմական Դպրանոցի նախկին ուսուցիչ՝ պ. Ի. Զուրաբեան:

Ուսուցիչների պարապմանց դառնալով, պարտք եմ համարում հրապարակաւ վկայել նոցա ամենքի բարեխղճութիւնը: Ուսուցիչներից ոմանք բացակայել են դասերից

կամ հիւանդ լինելով, կամ իբրև դատաւոր, երբեմն էլ իբրև վկայ կամ քննիչ դատարան կոչուած լինելով, կամ ընտանեկան և պաշտօնական այլ և այլ յարգելի պատճառներով և կամ պաշտօնական գործով քաղաքից հեռացած լինելով: Ուսուցիչներից Գ. սրկդ. Զէօրէքչեանը վարել է ձրիապէս ուսուցչաց խորհրդի քարտուղարի պաշտօնը, իսկ մեծամասնութիւնը նոյնպէս ձրիապէս վարել է դասարանի դասատիարակի պաշտօնը:

1900—1901 ուսումնարանական տարում Օգոստոսի 21-ին սկսուել են վերքննութիւնները և նորեկ աշակերտների ընդունելութիւնը, որ տեւել է մինչև 26-ը, իսկ պարապմունքները սկսուել են նոյն ամսի 28-ին և տեւել են մինչև Մայիսի 12-ը. Դ. և Զ. դասարանցիք քննութեանց պատրաստուելու համար արձակուել են Ապրիլի 10-ին. քննութիւնները սկսուել են Ապրիլի 16-ին և տեւել են մինչև Մայիսի 15-ը. ուսման օր ունեցել ենք ընդամենը 170: Քննութեանց ժամանակից առաջ աւարտման պատճառն է եղել երրորդ յարկի շինութեան ձեռնարկելը:

Անցեալ ուսումն. տարուայ ընթացքում մանկավարժական խորհուրդը իւր 12 հերթական նիստերում պարապել է սովորական ընթացիկ խնդիրներով, քննել է քաղաքական, տարեկան և քննական յառաջադիմութեան արդիւնքները, ընտրել է դասարանների դասատիարակներ և իւր ժողովների քարտուղար, հին ձեռնարկների տեղ ընդունել է գործադրութեան աւելի յարմար նոր ձեռնարկներ. քննել է և ընդունել է նաև ուսումն. յանձնաժողովի առաջարկութիւնները ուսման ծրագրի փոփոխութեան նկատմամբ և վերջապէս խորհել է աշակերտաց դաստիարակութեան միջոցների մասին: Այլ և երկու արտակարգ ժողովներում ընտրել է երկու վերակացու, մի ուսուցիչ Պատրաստականների հայրենի համար և մի ուրիշը Բնագիտու-

թեան և Բնական պատմութեան դասերի համար։ Պարզ ուսումնական յանձնաժողովի պարապմանց պէտք է նկատել, որ սա բացի իւր սովորական զբաղմունքներից (մանկական առաւօտների և երեկոյթների ծրագիր կազմել, պարզևարաշխութեան գրքեր որոշել և այլն) մի քանի նիստ նուիրել է յատկապէս Հայոց լեզուի և բնական պատմութեան մանրամասն ծրագիրները և աշակերտական կանոնագրութիւնը մշակելու խնդրին։ Հարկաւոր եմ համարում այստեղ յիշել նաև, որ ուսման ծրագրի մշակումը շարունակվում է և ներկայ ուսումնարանական տարում։

Հաշուետուութեան տարում մատենադարանի թէ կազմը և թէ գրքերի քանակը համարեա նոյնն է մնացել, ինչ որ և նախորդ տարում։ Այսպէս.

1. Աստուածարն. բաժինը ունէր	100	անուն	151	հատոր	գ.
2. Փիլիսոփայական ,, ,,	20	,,	27	—	
3. Պատմ. կենսագր և Աշխարհագր.	189	,,	269	—	
4. Մատենագրականը (հինը)	83	,,	96	—	
5. ,, (նորը)	264	,,	311	—	
6. Բանասիրականը	30	,,	32	—	
7. Մանկավարժականը և բժշկ.	36	,,	45	—	
8. Թատերականը	48	,,	53	—	
9, Քերականական, լեզուագիտականը և զանազան լեզ. բառարաններ	54	,,	143	—	
10, Դասագրքեր	57	,,	73	—	
11, Բնապատմական	16	,,	20	—	
12, Ամսագրեր	22	,,	136	—	
13. Մանկական	110	,,	140	—	

Ռուսաց բաժինը ունէր

1, Աստուածարան. և լեզուագիտ,	32	անուն	40	հատոր	գ.
2. Պատմ. կենսագր. և Աշխարհագր։	141	,,	154	—	

3. Մատենագրական	138	անուն	197	հատոր	գ.
4. Մանկական	176	,,	193	—	
5. Ամսագրեր	17	,,	212	—	

Այս գրքերի վրայ պէտք է աւելացնել և զանազան անձինքներից ընծայ ստացուածները։ Դպրանոցի մատենադարանին նուիրել են 1) բժ. Ա. Բուդուղեան ,,Աշակերտի Առողջապահութիւն'' (50 օր. բաժանուած է աշակերտներին), «Ո՞վ է յանցաւորը» (5 օր.), ,,Առողջ հոգին առողջ մարմնի մէջ'' (2 օր.) «Գեղձախտ» (2 օր.) 2) Պ. Ս. Զահաղիզ ,,Յիշողութիւններ Վարդանանց տօնի առթով'' 3) Պ. Ա. Ծատուրեան՝ ,,Գրչի հանաքներ'',4) Բարձր. Մուշէ վարդապետ՝ ,,Գոյր երաժիշտ'', 5) Մեսր. քհն. Մելեան՝,,Քահանայական խնդրի շուրջը'' 6) Պ. Ե. Զահաղիզ՝ ,,Ն. Նախիջևանի Ս. Խաչ վանքը 7) Պ. Ս. Թանդեան ,,Ռբվիու դը դէօ մոնդ,, երկու տարուայ 8) Պ. Ս. Աւագեան Զինոց, Քոռ Եղիկը, Բերսայի Առաքելը, Ժառանգներ և 9) Ռոմանոս Մելիքեան աշակերտից Պտր. Դուրեանի բանաստեղծութեանց 1 օրինակ։

Աշակերտների ընթերցանութեան մասին դաղափար տալու համար հարկաւոր եմ համարում հաղորդել հետեւեալը.

Բարձր Նախակրթարանի 56 աշակերտ տարուայ ընթացքում կարդացել են մեծաւ մասամբ միջին հասակի մանկական գրքերից ընդամենը 1083 գիրք՝ 582 հայերէն և 501 ռուսերէն. եղել են դոցա մէջ և այնպիսիները, որ կարդացել են մեծ հասակի համար յատկացրած գրքերից, և ընդհակառակն մի քանիսը բաւականացել են փոքր հասակի գրքերով։ Իւրաքանչիւր աշակերտի վրայ ընկնում է մօտաւորապէս 19—20 գիրք։ Հայոց լեզուի մեկնողական դասերը բաւական նպաստել են ընթերցանութեան կանո-

նաւորութեան. կարդացած գրքերի բովանդակութեանը՝ հարց ու փորձ անելով աշակերտներին, միջոցը ներածին չափ, ծանօթացել է և մատենադարանապետը, և ըստ այնմ վարուել է գիրք փոխելիս։

Ա. դասարանի 47 աշ. կարդացել են 959 գիրք՝ 502 հայ. և 457 ռուսերէն. իւրաքանչիւրին բաժին է ընկնում մօտաւորապէս 20 գիրք։

Բ. դաս. 25 աշ. կարդացել են ընդամենը 587 գիրք, 294 հայ. 293 ռուս. իւրաքանչիւրի վրայ ընկնում է մօտաւորապէս 23—24 գիրք։

Ա. և Բ. դասարանների աշակերտների կարդացածը մեծ հասակի մանկական գրքեր էին ընդհանրապէս. երբեմն կարդացել են նաև ամսագրեր· Ամենից աւելի այդ դասարաններում կարդացուել են. ,,Աղբիւր'' ամսագիրը, Քամալեանի հէքիաթները, Արեգնազան, Արևելեան վիպաշխարհ, Майнъ Ридъ, Всходы ամսագիրը և նորա գրքերը, Читальня народной школы հանդէսի գրքերը, 100 разсказовъ изъ жизни животныхъ, Հորրորդ մոգը, Жюль Вернъ, Ուսկոկներ, Անահիտ, Родникъ, Дѣтское чтеніе ամսագրերը, Բենիամին Ֆրանկլին, Դէորգ Վաշինգթոն։

Գ. դասարանի 22 աշ. կարդացել են տարուայ ընթացքում ընդամենը 434 գիրք՝ 242 հայերէն և 192 ռուսերէն. կարդացած գրքերի բովանդակութիւնը եղել է կամ վիպագրական, կամ պատմական, կամ ամսագրեր են կարդացել։ Մատենագրական բաժնից կարդացուած է 397 գիրք, պատմականից 13 գիրք և 24 ամսագիր։ Իւրաքանչիւրի վրայ ընկնում է մօտաւորապէս 20 գիրք։

Դ. դասարանի 18 հոգին կարդացել են 155 գիրք՝ 88 հայերէն և 67 ռուսերէն. այդ հաշուում մատենագրական գիրք կարդացուած է 116, պատմական 6, ամսագիր 22

և թատերական 11 գիրք։ Իւրաքանչիւրին ընկնում է մօտաւորապէս 8—9 գիրք։

Ե. դաս. 9 հոգին կարդացել են 198 գիրք՝ 113 հայերէն և 85 ռուսերէն, որոնց թուում 113 մատենագրական, 21 թատերական և 14 պատմական գիրք, 23 ամսագիր և 7 բառարան է առնուած։ Իւրաքանչիւրի վրայ ընկնում է 22 գիրք։

Զ. դաս. 10 հոգին կարդացել են տարուայ ընթացքում 218 գիրք՝ 95 հայերէն և 123 ռուսերէն. այդ հաշուում մատենագրական բաժնից առել են 113 գիրք, պատմականից 33, թատերականից 16, բանասիրականից 4. այլ և 18 բառարան և 30 ամսագիր։ Իւրաքանչիւրի վրայ ընկնում է մօտաւորապէս 21—22 գիրք։

Հոգաբարձութիւնս հայ հասարակութեան առաջ դնելով իւր գործունէութեան միամեայ համառօտ տեղեկագիրը, Դպրանոցիս ուսումնական մասի պատկերը, ինչպէս նաև Դպրանոցիս տարեկան ելումուտքի և երրորդ յարկի կառուցման հաշիւները, յոյս ունի ձեռնտուութիւն և համակրութիւն գտնելու հայ ժողովրդի բոլոր դասակարգերից. առանց այդ օգնութեան և համակրութեան զուր պիտի անցնին թէ մեր նախորդների, թէ մեր և թէ մեր յաջորդների ջանքերը։ Դպրանոցիս երրորդ յարկի կառուցումը դրամական մեծագումար պարտք է թողել Հոգաբարձութեանս վերայ։ Սակայն հաւատացած ենք, որ բարի գործի համար բարախող սրտեր և սուրբ գործի համար աշխատող ձեռքեր երբեք չպիտի պակասին մեր հասարակութեան մէջ։ Հոգաբարձական խորհուրդս դեռ աւելին է սպասում՝—հայ հասարակութիւնը իւր առատաձեռն օժան-

դակութեամբ, նպատաներով, որդեգիր—սաներ պահելով և կտակներ անելով Դպրանոցս կը դարձնէ ժամանակին արդարև մի այնպիսի ուսումնական հաստատութիւն, ուր սովորող բոլոր սաներն էլ գիշերօթիկ կը լինին։ Եւ այդ է մեր Դպրանոցի յարատևութեան եթէ ոչ միակ, գէթ գլխաւոր գրաւականը, քանի որ դա է և պիտի լինի մեր ժողովրդի աղքատ դասակարգի մանկանց պատսպարանը, նորա յուսոյ և լուսոյ խորանը։ «Որ ունեցի ականջս լսելոյ՝ լուիցէ»։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մյասնիկյան
անվան

Դպրանոցի երրորդ յարկի շինութեան եւ այդ առթիւ առաջին եւ երկրորդ յարկերի համար եղած ծախքերի հաշիւը.

	Երրորդ յարկը.		Առաջին և երկրորդ յարկերը		Բոլոր յարկերը.		Հատուցուած է		Կը մնայ հատուցանելու.	
Ա. Պուգաչեվի հաշուով										
251850 հատ նոր աղիւս շարելու (5 ր. 75 կ.)	1448	15								
33100 » հին » կոտրելու և շարելու (8 ր. 75 կ.)	289	62								
5600 » » » միայն շարելու 5—75	32	20								
7200 » » » միայն կոտրելու (3)	21	60								
906 » քիւ (կարնիզ) կոտրելու և շարելու (40 կ.)	362	40								
140 օր օրական աշխատանքի վարձ (1—40)			196							
Նոր հոր բանելու			50							
	2153	97	246		2399	97	1000		1399	97
Բ. Գուբարեվի հաշուով										
Դռների, պատուհանների փեղկերի, տախտակամածի, սանդղի և այլ աշխատանքի վարձ	1725									
175 օր օրական աշխատանքի վարձ (1—35)			236							
	1725		236		1961		1961			
Գ. Շիպուլինի հաշուով										
Պատերը և առաստաղները սուաղելու	743	63								
176 օրական աշխատանքի վարձ (1—25)»			220							
	743	63	220		963	63	963	63		
Դ. Շիրայեվի հաշուով										
Տանիքի երկաթը հանելու, նորից ծածկելու և ներկելու. յատակները, օմքերը, խողովակները ներկելու և այլն.	1000		526	40	1526	40	1275		251	40
Ե. Զորչոփեանի հաշուով										
251850 հատ աղիւսի, կիր ու աւազի	2800		224		3024		3024			
Զ. Կողպէքլեանի հաշուով										
Ալեբաստրի, խաչփայտի (դրան)	500		64		564		564			
Է. Շայեվիչի հաշուով										
Տախտակամածի ((պարկետի)			42	50	42	50	42	50		
Ը. Քրասիլնիկեանի հաշ.										
Աւազի	186	70			186	70			186	70
Թ. Մառտինի հաշ.										
Թուչկայ սանդուքքի, գերանների և սիւնների	1463	51								
Երկաթէ գերանների և սիւնների			530	03						
	1463	51	530	03	1993	54			1993	54
Ժ. Քիստեանի վաճառատան հաշ.										
Ամեն տեսակ աղաղի, գերաններ	4000		398	39	4398	39	1500		2898	39
ԺԱ. Սուքաշեանի հաշ.										
Ալեբաստրի, բեկսի և գերանների	616		350	45	966	45	966	45		
ԺԲ. Տաուլեցկիի հաշ.										
Բետոնէ սանդուքքի և յատակի			615	39	615	39			615	39
ԺԳ. Կոշկինի հաշ.										
Երկաթէ պէսպէս ապրանքների	1000		277		1277				1277	
ԺԴ. Զիգելի հաշ.										
Ջրանցքի պէսպէս պարագաների և խողովակների	300		79	69	379	69	190	50	189	19
ԺԵ. Մխիթարեանի հաշ.										
Երկաթէ զանազան ապրանքների	145				145		145			
ԺԶ. Դիմնիկովի հաշ.										
Պատուհանների և դռների ապակիների	300		106	40	406	40			406	40
ԺԷ. Ռայգորոդսկու հաշ.										
Ցղված աղիւսի (кафель)	59				59		59			
ԺՈ. Թաշչեանի հաշ.										
Միացուցիչ երկաթների (связи)	90				90		90			
ԺԹ. Աւագեանի հաշ.										
Դարբասի երկաթէ դռների			120		120		120			
Ի. Ժուռաւլեվի հաշ.										
Պարկետը շարելու			15		15		15			
ԻԱ. Տարասովի հաշ.										
Վառարանները և ջերմատաքի խողովակները շինելու	211		261		472		472			
ԻԲ. Խնձորեանի հաշ.										
Քարի (аршинный)			18		18		18			
ԻԳ. Զուռնաճիեանի հաշ.										
Առաստաղները ծեփելու	141	25			141	25	141	25		
ԻԴ. Պերեկանովի հաշ.										
Խաչփայտի (дрань)	80		4		84		84			
ԻԵ. Ժարովի, Իվանովի, Մարչենկոյի եւ Զելցերի հաշ.										
Երկաթէ պէսպէս ապրանքների	82	99	19	21	102	20	102	20		
ԻԶ. Օրով բանողների հաշ.										
Երեք մշակի	266				266		266			
ԻԷ. Գէորգեանի հաշ.										
Սուաղի համար կարեւոր մանր նիւթերի	8	17			8	17	8	17		
ԻԸ. Բելօգուրովի հաշ.										
Բակը մաքրելու	100				100		100			
ԻԹ. Դուրբախի հաշ.										
Ցատակագծի և շինութեան հսկողութեան վարձ	100				100		100			
Լ. Զասզերսկու հաշ.										
Ջրանցքի և արտաքնոցի վերաբերեալ զանազան պարագաների և աշխատանքի վարձ	100		45		145		145			
ԼԱ. Շիմարեովի հաշ.										
Վերահսկողի օգնականին եռամսեայ վարձ	60				60		60			
ԼԲ. Սերեբրակեանի հաշ.										
Շինութեան վերահսկողութեան վարձ	360				360				360	
ԼԳ. Վերահսկող Սերեբրակեանի ձեռքով ծախք եղած է զանազան հաշիւներով	365	41	4	50	369	91	369	91		
ԼԴ. Առաձգակալ երկաթների (скобы)	21	86			21	86	21	86		
ԼԵ. Ժուրավլեվի հաշ.										
Աշակերտական նոր նստարանները շինելու, հիները նորոգելու և կարգադրելու			734		734		734			
Ընդամենը . . .	18979	49	5136	96	24116	45	14538	47	9577	98

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՌ-Ում СССР
Ս. ՄԱՍՏՈՑԻ ԱՆՎԱՆ
им. А. Маскиева

Պ Ա Տ Կ Ե Ր

Ընդհանուր մտից եւ ելից գումարաց թեմական Դպրանոցի վիճ. վասն 1900-1901 ճեմ. տարւոյն

ՄՈՒՏՔ	Ր.	Կ.	Ր.	Կ.
1. Նախորդ ճեմարանական տարուանից կար յաւելեալ առ 1-ն Օգոստոսի	,,		3541	28
2. Տարուայ ընթացքում ստացուած է թոշակագրամ՝				
ա. գիշերօթիկ աշակերտներից	6900			
բ. երեք եկ աշակ. ա. կարգի	740			
գ. » » բ. »	980		8620	
3. Ստացուած է վարձագրամ Դպրանոցապատկան կրպակներից	2938	50	2938	50
4. Ստացուած է տարեկան վարձագրամ Խալիբեան Դպրոցի շինութիւնից	3000		3000	
5. Ստացուած է Եկեղեցական Հոգաբարձութիւնից հանդուցեալ Խաչերեսաղա Դիաչքեանի կտակաւանդած 101 հազարի 1900 ամի կարմնները	3838		3838	
6. Ստացուած է Քաղաքային Վարչութիւնից տարեկան նպաստը	6875	37	6875	37
7. Ստացուած է Քաղաքային Դրամանոցից Ընթացիկ հաշուով ձգուած գումարի %	44	70	44	70
8. Ստացուած է տարեկան նպաստ Նոր Նախիջեանի, շրջակայ գիւղերի և վիճակիս այլ եկեղեցիներից				
ա. Ն.Նախիջ. Ս. Լուսաւ. եկեղեցուց	600			
բ. » Ս. Գէորգ »	500			
գ. » Ս. Աստուածած. եկեղ.	400			
դ. » Ս. Նիկողայոս »	300			
ե. » Ս. Համբարձ. »	50			
զ. » Ս. Թորոս »	50			
է. Մեծ-Սալա գիւղի եկեղեցուց	75			
ը. Զալթը » »	75			
թ. Թոփսի » »	75			
ժ. Փոքր-Սալա » »	25			
ժա.Նիսվիթա » »	25			
ժբ.Ս. Պետերբուրգի »	750			
ժգ.Մոսկուայի »	250			
ժդ.Սիմֆերոպոլի »	30			
ժե.Հին-Ղրիմի Ս. Աստծ. »	15		3220	
9. Ստացուած է յուղարկաւորութիւններից	300		300	
10 Ստացուած է նուէր Դպրանոցիս բժիշկ՝ Ա. Քեչեկեանից	200		200	
11 Ստացուած է պատահական մուտք	10	22	10	22
Ընդամենը . . .	29046	79	32588	07

ԵԼՔ	Ր.	Կ.	Ր.	Կ.
Դպրանոցական մասը				
Ա. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՔ				
1. ա. Ռոճիկ Տեսչին, Օգնականին, ուսուցիչներին, վերակացուներին, մատենադարանապետին և գործավարին	17919	96		
բ. Կենսաթոշակ նախկին ուսուցիչ պ. Գէորգ Խաչատրեանին	300			
գ. Ռոճիկ բժիշկ պ. Ա. Քեչեկեանին	200			
դ. » ծառաներին	500			
ե. Դպրանոցի տան ապահովութեան	82	36		
զ. » կահ-կարասեաց ապահ.	33	80		
է. Ռոճիկ մեքենագրի վարպետին	70		19106	12
Բ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԾԱԽՔ				
2. ա. Մատենադարանի և ֆիզիքական թանգարանի պէտքերի համար	43	41		
բ. Պարգեւաբաշխութեան գրքերի	31	30		
գ. Լրագիր և ամսագիր բերելու	87	30		
դ. Տպարանի, կազմի և պէսպէս թղթերի տպագրութեան	75		237	01
Գ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՔ				
3. ա.Դպրոցական պէսպէս հանդիսակատարութեանց՝ Տարեդարձի, Վարդանանց աօնի և այլն	180	71		
բ. Քարածուխի և վառելափայտի	700			
գ. Պ.Տեսչին՝տարեկ.վառելիքի գինը	200			
դ. Լուսաւորութեան	80			
ե. Հոբը պարպելու	153			
զ. Մաքրութեան և պէսպէս նիւթեղինաց	30			
է. Ջրանցքի և ջերմատաքի նորոգ.	28	85		
ը. Դպրանոցի այլեայլ մասերի կարկատանաց և պ. Տեսչի բնակարանի նորոգութեան	310	70		
թ. Մանր ծախք՝ օրական մշակների, կառքի, նամակատան և այլն	30			
ժ. Անակնկալ ծախք՝ դատաստանական և այլն	30	76	400	31
Դ. ԹԱԼԻԲԵԱՆ ԴՊՐՈՑԻ ԾԱԽՔԸ.				
4. ա. Պ. Խնձորեանի ձեռքով կատարուած նորոգութեան	2192			
բ. Կէյլ ճարտարապետին վարձատ.	50		2242	
Ընդհ. ծախք Դպրանոց. մասի			23329	15
Գիշերօթիկների մասը				
Ա. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՔ.				
5. ա. Ռոճիկ վերակացուին	600			
բ. Նպաստ վերակացու պ. Ծ. Զուբարեանին	120			
գ. Նպաստ նախկին վերակացու պ. Մ. Տէր-Թադէոսեանին	400			
դ. Ռոճիկ անտեսին	400			
ե. » Ծառաներին	493	30	2013	30
Բ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԾԱԽՔ				
6. ա. Ուսումնարանական պէտքերի՝ գիրք, տետրակ և այլն.	274	54		
բ. մարմնամարզութեան գործիք.	25	50	300	04
Գ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՔ.				
7. ա. Ուտելիքի՝ հաց, միս, բանջարեղէն, նպարեղէն, ընդեղէն, կաթ, մածուն և այլն	2468	67		
բ. Հագնելիքի՝ զգեստ, կօշիկ, կրկնակօշիկ, գլխարկ, գօտի	1808	56		
գ. Վառելիքի և լուսաւորութեան	409			
դ. Հոբը պարպելու	130	76		
ե. Լուացքի	425			
զ. Բաղանիքի	65	80		
է. Պէսպէս անօթն. իրեղէն. և այլն	43	92		
ը. Մանր ծախքի	39	82	5391	53
Դ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԾԱԽՔ.				
ա. Դեղօրէից և այլ պարագայից			88	66
Ընդհ. ծախք գիշերօթիկ մասին			7793	53
Ընդհանուր ծախք Դպր. և գիշերօթ.			31122	68
Առ 1-ն Օգոստոսի 1901-1902 ճեմ. ամի կայ յաւելեալ			1465	39
Ընդամենը. . .			32588	07

Гос. Библиотека
ZUUN-Арм.ССР
им. А. Мясникяна

20088

2013